

## **ՀՀ Սյունիքի մարզպետ Վահե Հակոբյանի ելույթը «Սիսիանը՝ 2014 թ. երիտասարդական մայրաքաղաք» միջոցառումների մեկնարկի առիթով**

Սիրելի՛ սյունեցիներ, հարգարածա՛ն հյուրեր, հարգարժան պարոն փոխվարչապետ, երիտասարդ բարեկամներ...

Այսօր Սյունիքի մարզի Սիսիան քաղաքում ենք մեկտեղվել բոլորս՝ մեծ թե փոքր, բայց մեծարելու և կարևորելու ենք երիտասարդներին: Սյունիքի մարզի համար պատիվ էր Սիսիանը երիտասարդության մայրաքաղաք հայտարարելը: Շնորհակալ եմ, բոլոր նրանց, ովքեր կանգնած են այս նախաձեռնության ակունքներում և նման հնարավորությունը պարգևեցին սյունեցիներին: Կարծում եմ, մենք էլ պետք է առիթը օգտագործենք և փորձենք գողտրիկ այս քաղաքում առանցքային հարցեր լուծել: Անցել են ժամանակները, երբ հոչակագրերով ու հայտարարություններով դրախտ էին խոստանում երկրի վաղվա տերերին: Սիսիանում, ինչպես և մեր այլ համայնքներում, խնդիրներ շատ կան, բայց խոսել այդ մասին, կնշանակի շեղվել օրվա խորհրդից: Ինքս դա չեմ անի ու կխնդրեմ բոլորին այնպես անել, որ սիսիանցի երիտասարդը այս տարին իրենը համարի: Ես ուզում եմ, որ իրատես լինենք, զերծ մնանք երիտասարդությանը նվիրված կարգախոսային մեջբերումներից և անկեղծ երկխոսությամբ հստակեցնենք մեր անելիքները: Պետությունը, ի դեմս սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության, ընթացիկ տարվա ընթացքում Սիսիանում մի շարք ծրագրեր է կյանքի կոչելու: Համո Սահյանի հարյուրամյակին նվիրված միջոցառումների շրջանակներում ևս կլինեն ուշագրավ ձեռնարկներ: Եվ ցանկանում եմ, այս ծրագրերին ավելացնել իմ ու մարզային իշխանության նախատեսած քայլերը, որոնք ակնկալում եմ՝ կլինեն արդյունավետ ու կնպաստեն համախմբվածության: Չեմ թաքցնի՝ ինձ համար կարևոր է, որ նախատեսված բոլոր միջոցառումները նպաստեն Սիսիանի երիտասարդության համախմբմանը: Տոնացույցում երիտասարդությանը նվիրված բազմաթիվ օրեր կան, սակայն ես ցանկանում եմ կարևորել դրանցից երկուսը. Կառավարությունը, կարևորելով Երևանի պետական համալսարանի հսկայական ավանդն ու նշանակությունը, կրթության և գիտության նախարար Արմեն Աշոտյանի առաջակությամբ որոշել է հայ կրթական և գիտական, մշակութային և երիտասարդական կյանքում, օրենքով ամրագրել նրա հիմնադրման օրը և մայիսի 16-ը հետայսու նշել որպես ուսանողների և երիտասարդների՝ պետականորեն նշվող տոն:

Եվս մեկ կարևոր հանգամանք. 2014 թվականի մայիսի 12-ին լրանում է նաև հրադադարի հաստատման 20 ամյակը: Միավորելով այս օրերի խորհուրդները՝ առաջարկում եմ մայիսի 16-18-ը կազմակերպել սիսիանցի 50 երիտասարդների շրջագայությունը Արցախ: Հիշարժան դառնալու ևս մեկ առիթ էլ կարող է դառնալ օգոստոսի 12-ը՝ երիտասարդության միջազգային օրը: Առաջարկում եմ նաև օգոստոսի 12-14-ը, դարձյալ 50 երիտասարդների համար կազմակերպել վրանային ճամբար Սիսիանի տարածաշրջանի հրաշք բնության որևէ վայրում: Երկու այս ձեռնարկների մասնակիցների

ընտրությունն ու կազմակերպական առաջարկությունները վերապահում եմ ձեզ՝ սիրելի՛ երիտասարդներ: Կարծում եմ՝ կկարողանաք գտնել ճիշտ բանալին ու միավորվելով՝ կատարել համապարփակ առաջարկություն: Վստահեցնում եմ, որ Կառավարության տարածքային քաղաքականությունն իրականացնող կառույցը՝ մարզպետարանը, որքան էլ սուղ հնարավորություններ ունենա, անմասն չի մնա, որևէ արդյունավետ ծրագրից: Ակնկալում եմ, որ այս օրը կդառնա սերունդների երկխոսության սկիզբ ու իրար փոխլրացնելով՝ կկերտենք ա՛յն քաղաքը, ա՛յն մարզը ա՛յն երկիրը, որը երազում ենք:

Շնորհակալություն: